

մեծ — Նոր խանը, և Վալիաէ խանին հետ կ'ըլլայ գըլ-խաւոր կեդրոն ու օթեւան սեղանաւոր — վաճառական հայ ամիրաներուն և մեծատուններուն՝ մանաւանդ սեղանաւորներուն, որ այդ հսկայակուռ շէնքերուն մէջ աւելի հսկայակուռ առեւտուրներու ձեռնարկներով իսկ՝ չկըրցան դարձեալ մինչև տասնե. իններորդ դարու իբրև կէսէն ասդին ալ անխարխար պահել, այդ խաներուն չորեքկանգնեան վեմերուն և որմերուն հետ, իրենց հարստութիւնն և հեղինակութիւնը. չկրցան սիրել զիրար աննախանձութեան մը շափ ու տեւել համերաշխաբար իրենց նախանձելի դիրքին մէջ: Մեծ Նոր խանը մանաւանդ՝ հայ ամիրաներուն խորանն եղած է հարիւր տարիի մը շափ:

Ասոնցմէ դուրս և ժամանակով աւելի նոր է՝ Զարպ-խանէ Սարբաֆի Երուսնն և Բասա օղլուն, որոնց Ապուշեխցի Բեդրաքի հռչակաւոր Չէլէպին ծառայած էր նախ և ապա յաջորդած: Այս Բեյրաքի հայ-հոռոմ Չէլէպիին ազդեցութիւնն ու պատիւը մեծ էր օսմանեան ազնուականներուն մէջ, որոցմէ շատն հարստացան՝ միայն իր հաշուազէտ գործառնութեանց շնորհիւ. բայց ինք ու վերոյիշեալ Երզուպ աղան ալ՝ չգիտնալով խոհմութեան սահմանին մէջ կանգ առնել, շուտ ինկան 1:

Ալընցի այս Երզուպ աղան Յովհաննէսեան. Նալեան Յակոբ պատրիարքին՝ ամէն գործերու մէջ՝ ձեռնառու էր, և Նալեան ալ իր Երուսաղէմական պատրիարքութեան միջոցին շատ անգամ կը թղթակցէր անոր հետ և կը հրաւիրէր ալ ուխտի յԵրուսաղէմ՝ կոչելով զայն վաճառապետ արքունի. նոր Յովսէփ գեղեցիկ ժամանակին և երկրորդ Զօրաբաբէլ տաճարաշէն: Եւ Երզուպ աղան ալ Երուսաղէմ ուխտագնաց ըլլալով՝ դարձին հետը Պուլիս բերաւ ու Պուլիսի Պատրիարքութեան աթոռը նստեցուց Նալեան Սրբազանն՝ ըստ թախանձագին փափագի այս վերջինին:

Կայ Երուսաղէմի Վանքը պղնձի յիշատակարան տախտակ մը, որուն վրայ մի առ մի գրուած են Երզուպ աղայի բարեպաշտական բնժաներն ու յիշատակ-